ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2026 թվականի թիվ 33-Ա

ՇՈՒՇԱՆԻԿ ՌԱՖԻԿԻ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման և բողոքարկման կարգի» 6-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Ջուլհակյանի 2026 թվականի մարտի 2-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

Շուշանիկ Ռաֆիկի Ջուլհակյանին 2026 թվականի մարտի 2-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը /նշանակումը/:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-03-03 08:50:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. մարտի 2
ք.Իջևան